ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/55

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի 20.12.2017թ. ներկայացրած համանման բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.12.2017թ. ներկայացրել է համանման բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձոր համայնքի գետերի հուների մաքրման ծառայությունների իրականացման համար հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Մրցույթին մասնակցել են «ԳԵՎՏԱՆԻՔ» և «Մոս-Մար» ՍՊԸ-ները: «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն ներկայացրել է ցածր գնային առաջարկ և ճանաչվել է հաղթող մասնակից:

Սակայն «Մոս-Մար» ՍՊԸ-ն՝ համաձայն չլինելով համայնքապետարանի որոշման հետ, 14.12.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման Խորհրդին՝ խնդրելով, որ Խորհուրդը դադարեցնի «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության

5-րդ կետով կայացված՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը, քանի որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարը նշել է գնի առաջարկի երկու տոկոսի չափով, ինչը, ըստ «Մոս-Մար» ՍՊԸ-ի, գնումների մասին ՀՀ օրեսդրության խախտում է»:

Ընկերությունը նշել է, որ, եթե իր կողմից ներկայացված մասնակցության հայտի Հավելված 9-ով ներկայացված և վերջինիս գնային առաջարկի 2 տոկոսը կազմող տուժանքի մասին հայտարարությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշված գումարը գնումների մասին ՀՀ օրեսդրության խախտում է, ապա «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը նույնպես ներկայացված է նույն օրենսդրության խախտումով, քանի որ այն կազմում է վերջինիս գնի առաջարկի հինգ տոկոսից ավելի:

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն հավելել է հետևյալը.

«Հրավերի օրինակելի ձևում սահմանվել է Հավելված թիվ 4-ը՝ գնային առաջարկի ներկայացման օրինակելի ձևը: Նշված օրինակելի ձևում սահմանվել է, որ մասնակիցը պետք է նշի մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը), սակայն «Մոս-Մար» ՍՊԸ-ն չի պահպանել հրավերի Հավելված թիվ 4-ով նախատեսված օրինակելի ձևի լրացման կարգը՝ չի նշել ղեկավարի պաշտոնը և անուն ազգանունը, ինչի պայմաններում գտնում ենք, որ մասնակցի հայտը նույնպես ենթակա է մերժման»:

Որպես Բողոքի իրավական հիմք Ընկերությունը նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 32-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը, 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.1 կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածով՝ Ընկերությունը ներկայացրել է համանման բողոք՝ խնդրելով դադարեցնել «ՄՈՍ-ՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի հրավերին համապատասխանող գանահատելու մասին «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացված որոշումը:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնկցությունը նշված նիստերին:

2. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.12.2017թ. թիվ 061/11226 գրությամբ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթին հայտ են ներկայացրել 2 մասնակից՝ «ՄՈՍ-ՄԱՐ» ՍՊԸ-ն և «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ն, որոնցից «ՄՈՍ-ՄԱՐ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է 5%-ից ավելի, իսկ «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ն՝ 2%: Գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, որի համաձայն հայտի ապահովման չափը պետք է լինի առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսը, որից էլ ելնելով, հանձնաժողովը որոշում է կայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ին, որը ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Դավիթ Խաչատրյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. Խորհրդին ներկայացված համանման բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.12.2017թ. ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրությունը, «Մոս-Մար» և «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի գետերի հուների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ են ներկայացրել «Մոս-Մար» և «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ները:

Հանձնաժողովը՝ 06.12.2017թ. ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգին «ԳԵՏՎԱՆԻՔ» ՍՊԸ-ի առաջարկած ընդհանուր գինը կազմել է 8,500,000 ՀՀ դրամ, իսկ «Մոս-Մար» ՍՊԸ-ի առաջարկած ընդհանուր գինը՝ 9,498,440 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի Հավելված 9-ի՝ տուժանքի մասին հայտարարությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշված գումարը կազմում է վերջինիս գնային առաջարկի 5 տոկոսից ավելի գումար, ինչը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, հետևաբար, ըստ Ընկերության, «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը նույնպես ներկայացված է նույն օրենսդրության պահանջների խախտումով և ենթակա է մերժման:

Բացի այդ, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն նշել է, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել Հրավերի օրինակելի ձևով սահմանված Հավելված թիվ 4-ի՝ գնային առաջարկի ներկայացման օրինակելի ձևով նախատեսված վավերապայմանները, մասնավորապես՝ «Մոս-Մար» ՍՊԸ-ն հիշյալ փաստաթղթում չի նշել ղեկավարի պաշտոնը և անուն ազգանունը, ինչը նույնպես հանդիսանում է մասնակցի հայտը մերժելու հիմք:

Բողոքի քննության նպատակով 19.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում նշված գումարը կազմել է վերջինիս գնային առաջարկի 2 տոկոսը, սակայն նշեց նաև, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի հայտում ևս արձանագրվել է անհամապատասխանություն Հրավերի պահանջներին՝ մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը կազմել է հինգ տոկոսից ավելի գումար, ինչը նույնպես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում է: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով երկու ընկերությունների կողմից ներկայացված հայտերը և առաջնորդվելով Ընթացակարգի շրջանակներում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվությունը տալու սկզբունքով, ինչպես նաև համայնքի բյուջեի միջոցների տնտեսումն ապահովելու նպատակով՝ որոշել է «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի՝ իրավական ակտը պետք է մեկնաբանվի է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի՝ 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի՝

- 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:
- 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ 18/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում նշված գումարի չափը կազմում է վերջինիս հայտով առաջարկվող գնի 5,0008 տոկոսը (475,000 ՀՀ դրամ):

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատվել են գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հրավերի օրինակելի ձևի Հավելված 4-ով նախատեսված գնային առաջարկով ի թիվս այլոց սահմանվել են հետևյալ վավերապայմանները՝ մասնակցի անվանումը, ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը, ստորագրությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում նշվել է Ընկերության ղեկավարի պաշտոնը՝ տնօրեն, և նշված փաստաթուղթը կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով հաստատվել է Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը պարունակում է նաև Ընկերության տնօրենի անունը և ազգանունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, հաշվի առնելով, որ համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Մոս-Մար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը վավերացվել է տնօրենի անուն ազգանունը պարունակող էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Խորհուրդը գտնում է, որ նշված փաստաթուղթը բովանդակային առումով ամբողջական է:

Խորհուրդը գտնում է նաև, որ եթե Հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին, իսկ «Մոս-Մար» ՍՊԸ-ն ապահովել է Հրավերով սահմանված պահանջը՝ հայտի ապահովման առավելագույն չափը, այսինքն, վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովումը պակաս չի եղել հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսից, ապա տվյալ դեպքում «Մոս-Մար» ՍՊԸ-ի հայտը բավարարում է Հրավերով սահմանված պահանջներին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Մոս-Մար» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**